ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Հաստատված է

«ՎԻՆՆԵԹ Հայաստան»
Կանանց Ռեսուրս կենտրոնների Ցանցի
6-րդ ընդհանուր ժողովի որոշմամբ
22.06.2019թ.

ՎԻՆՆԵԹ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈԼԻՑԻՈՆ ՑԱՆՑԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԶԳԱՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿՆՈՒԹՅԱՆ և ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ՔՀԿ_ՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ և ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՊԼԱՆ

(2019-2021թթ.)

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիննեթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիննեթ Հայաստան» կոալիցիան և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

1. **ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.** Գենդերային զգայուն բյուջետավորման մեխանիզմների բարելավում համայնքներում և ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների բարելավում ՀՀ պետական բյուջեի ձևավորման գործընթացներում

Ծրագրի նպատակները.

- Նպաստել ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի ու Տավուշի մարզերի խոշորացված համայնքների տեղական բյուջեներում և տեղական մակարդակում իրականացվող ծրագրերում երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման արդյունավետ մեխանիզմների մշակմանն ու ներդրմանը:

- Բարելավել ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմները ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում, ինչպես նաև բարձրացնել նրանց մասնակցությունը այդ մեխանիզմների բարելավման, մշտադիտարկման, ջատագովության գործընթացներում:

Հայաստանի Հանրապետությունը ֆորմալ վավերացրել է գենդերային ուղղվածության գրեթե բոլոր միջազգային իրավական ակտերը և որպես ՄԱԿ-ի ու Եվրախորհրդի անդամ և Եվրոպայի ինտեգրմանը միտված անկախ պետություն, ստանձնել է որոշակի պարտավորություններ՝ ոչ միայն վավերացնել միջազգային կարևորագույն իրավական փաստաթղթերը, այլև համաձայնեցնել ազգային օրենսդրությունն այդ փաստաթղթերի դրույթներին:

Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնախնդիրը, հանրային և տնտեսական ոլորտում կանանց հնարավորությունների ընդլայնումը, պետական նպատակային քաղաքականության մշակումը այն հիմնական ռազմավարական նպատակներն են, որոնք ընդգրկված են ինչպես միջազգային՝ Պեկինյան գործողությունների ծրագիր, Հազարամյակի զարգացման նպատակներ և ՄԱԿ-ի <<Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին>> կոնվենցիա, այնպես էլ տեղական՝ ՀՀ կառավարության գործունեության 2012-2015թթ. ծրագիր, ՀՀ կառավարության կողմից արձանագրային որոշմամբ հաստատված Գենդերային քաղաքականության հայեցակարգ, ՀՀ Կայուն զարգացման ծրագիր փաստաթղթերում, «CEPA»-ում ավելի ընդհանրական իմաստով (գենդերային հավասարություն բաժնում), «2020» փաստաթղթում՝

Գենդերային հավասարություն և հակախտրականություն ավելի ընդհանրական իմաստով (գենդերային հավասարություն):

Պեկինյան գործողությունների պլատֆորմում գենդերային բյուջեների վերաբերյալ նշվում է. <<Ուսումնասիրելով կանանց անկախությունը և նրանց տնտեսական ներուժը, կառավարությունը և այլ գործող անձինք պետք է աջակցեն ցանկացած ծրագրում գենդերային ակտիվ և շոշափելի քաղաքականության իրականացման հեռանկարների որոշմանը այն ձևով, որպեսզի մինչև որոշման ընդունումը անցկացվի կանանց և տղամարդկանց վրա դրանց ազդեցության վերլուծություն (պարագրաֆ 164), ինչպես նաև կառավարությունները պետք է նպաստեն բյուջեի մշակման առավել բաց և թափանցիկ գործընթացին (պարագրաֆ 165)>>: Կառավարությունները պետք է ներդնեն բոլոր ջանքերը համակարգված ձևով ուսումնասիրելու, թե պետական ոլորտում կատարված ծախսերը ինչ օգտակարություն ունեն կանանց համար և ճշգրտեն բյուջեները՝ ապահովելու համար հավասար մատչելիություն պետական ոլորտի ծախսերի նկատմամբ (Պեկինյան գործողությունների պլատֆորմ, պարագրաֆ 346):

Գենդերային զգայուն բյուջետավորումը մի մոտեցում է, որը մշակվել է՝ գենդերային բաղկացուցիչը բյուջետային շրջապտույտի բոլոր փուլերում տարածելով: Այն վերաբերում է գենդերային զգայուն տեսանկյունից բյուջեների մշակման, պլանավորման, հաստատման, իրականացման, մշտադիտարկման, վերլուծության և աուդիտի գործընթացին: Այն ներառում է կանանց և աղջիկների վրա կատարված իրական ծախսերի վերլուծությունը՝ համեմատած տղամարդկանց և տղաների հետ՝ հաշվի առնելով նրանց տարբեր կարիքները և առաջնահերթությունները: Այն օգնում է որոշել՝ ինչպես ռազմավարությունները պետք է մշակվեն, փոփոխվեն և վերահաստատվեն առաջնահերթությունները: Այն քաղաքականության իրականացման արդյունավետ գործիք է, որտեղ կարելի է ստուգել՝ արդյոք հատկացումները համապատասխանում են քաղաքականությունների հանձնառություններին և ունենում են ցանկալի ազդեցություն:

Այլ կերպ ասած՝ **գենդերային բյուջեն** ընդգրկում է պետության/համայնքի և հասարակության փոխհարաբերությունների բոլոր այն ուղղությունները, որոնցում այս կամ այն չափով մասնակցում են պետության/համայնքի միջոցները և որոնք կարող են տարբեր կերպ ազդել կանանց և տղամարդկանց (ինչպես նաև խոցելի խմբերի) սոցիալական վիճակի վրա:
Ընդհանրապես ՀՀ պետական բյուջեում ներկայացված ծրագրերը չեն ներառում սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում ռազմավարական հետազոտություններ: Այդ տեսանկյունից, օրինակ՝ պետական բյուջեի միջոցների բաշխման գենդերային վիճակագրության իրականացումը հնարավորություն կտա որոշել սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերի արդյունավետության մակարդակը: Ելնելով դրանից, բոլոր մակարդակների բյուջեների գենդերային փորձաքննության իրականացումը բյուջեի մշակման նախնական փուլում հնարավորություն կտա հայտնաբերել կանանց և տղամարդկանց (ինչպես նաև խոցելի խմբերի) սոցիալ-տնտեսական կարգավիճակի վրա բյուջետային միջոցների բաշխման ազդեցությունը: Եվ ոչ միայն, ընդհանրապես հանրային լայն մասնակցությունը, մասնավորապես ոլորտային ՔՀԿ-ների մասնակցությունը ՀՀ

պոտական բյուջեի ձևավորման գործընթացներում կնպաստի բյուջեի ձևավորման ներառականությանը. Արտահայտելով բոլոր խմբերի կաիքները և շահերը:
ՀՀ-ում թույլ են՝

- բյուջեներում և տեղական մակարդակում իրականացվող ծրագրերում երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման մեխանիզմները,
  - ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմները ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում:

Դրանք ենթադրում են խտրականությունից զերծ մոտեցումների և քաղաքականության մշակում, բարեփոխումների իրականացում և դրանց հսկողության նպատակով բավարար միջոցների տրամադրում:

Վերջնանպատակ 1

- ՀՀ համայնքների տեղական բյուջեներում և տեղական մակարդակում իրականացվող ծրագրերում հաշվի են առնվում երեխաների և գենդերային զգայուն խնդիրները:

Վերջնանպատակ 2

- ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում ՔՀԿ-ները ունեն ակտիվ ներգրավվածություն և այդ բյուջեները արտացոլում եմ հանրության լայն շերտերի կարիքների լուծումը:

Նպատակ 1

Երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման արդյունավետ մեխանիզմների թույլ մակարդակի հաղթահարում ազգային և տեղական մակարդակներում, ինչպես նաև ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կոալիցիաների շրջանում:

Նպատակ 2

ՔՀԿ-ների ցածր ներգրվվածության հաղթահարում՝ Երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման արդյունավետ մեխանիզմների մշակման, բարելավման, մշտադիտարկման և ջատագովության գորընթացներում:

Քարոզարշավի թիրախ լսարանները

ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԹԻՐԱԽ ԼՍԱՐԱՆՆԵՐԸ

- ✓ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն - փոխնախարար տիկին Անդրեսյան,

- ✓ ՀՀ ֆինանսների նախարարություն - փոխնախարար պարոն Բրուտյան,
- ✓ ՀՀ Ազգային ժողով - «Կանանց Օրակարգ» հարթակում ներգրավված կին պատգամավորներ,
- ✓ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն – Տարածքային Կառավարման վարչության պետ պարոն Գիլոյան,
- ✓ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն - Սոցիալական ապահովության ծառայություն,
- ✓ ՀՀ քաղաքաշինության կոմիտե,
- ✓ Մարդու Իրավունքների պաշտպանի գրասենյակ - պարոն Արման Թաթոյան,
- ✓ ՄԱԿ-ի Գենդերային Թեմատիկ խումբ,
- ✓ ՀՀ մարզպետարանների սոցիալական հարցերի բաժիններ,
- ✓ Մարզպետարանների Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները,
- ✓ ՀՀ համայնքների ղեկավարներ, ֆինանսական բաժնի պատասխանատուներ,
- ✓ ՀՀ համայնքների սոցիալական հարցերի բաժիններ,

ՈՒԺԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Նպատակը և ենթանպատակները կամ խնդիրները	Ովքե՞ր են հիմնական որոշում կայացնողները: Ինչպիսի՞ դիրքորոշում ունեն նրանք խնդրո առարկայի վերաբերյալ. **Դաշնակից** **Չեզոք** **Խոչընդոտող**	Ո՞վ կարող է ներազդել նրանց վրա: Նրանց դիրքորոշումը: Ազդեցության աստիճանը՝ **Մեծ** **Միջին** **Ցածր**	Ովքե՞ր են ձեր հիմնական դաշնակիցները կամ գործընկերները այս հարցում:	Ի՞նչը կազդի որոշում կայացնողների վրա: (գաղափարներ, ապացույցներ, փաստարկներ, հետազոտություն, հավասարակիցների ճնշումներ, քաղաքական փոփոխություններ)	Ինչպիսի միջավայրում /շրջանակում են որոշումները կայացվում: - Փակ - Ներկայացուցչական / հրավիրովի - Պահանջով ձեռքբերված
ՀՀ համայնքների տեղական բյուջեներում և տեղական մակարդակում իրականացվող ծրագրերում հաշվի են առնվում երեխաների և գենդերային զգայուն խնդիրները:					
1. ՀՀ համայնքների Տեղական Բյուջեներում և տեղական մակարդակում իրականացվող ծրագրերում հաշվի են առնվում երեխաների և գենդերային զգայուն խնդիրները:	1.1 ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՏԿ վարչության պետ պարոն Գիլոյան, որը Գորիս համայնքի օրինակը /„Սուբվենցիոն ծրագրերի հանրային լսումներին ՔՀԿ-ների և համայնքի բնակիչների մասնակցության կարգը„/ կջատագովի խոշորացված համայնքների ղեկավարների շրջանում: 1.2 Պարոն Գիլոյանի աջակցությամբ ընթացք կտրվի սուբվենցիաների քվոտավորման նախագծի	ՀՀ վարչապետի օգնական տիկին Սրբուհի Ղազարյանը, Գենդերային թեմատիկ խումբը /համանախագահողներն են ՀՀ սոցիական հարցերի նախարարությունը և ՄԱԿ-ի գրասենյակը/ Միջազգային կազմակերպությունները - ֆինանս (Մեծ) ԶԼՄ (միջին-մեծ) Քարոզարշավ (ճանապարհով	«ՕքսիՋեն» Հիմնադրամը, որ համակարգում է „Կանանց Օրակարգ„ հարթակը: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը, «Վիննեթ» ցանցի գործընկերը «Վիննեթ Հայաստան» խորհրդի անդամները /ԱԺ պատգամավոր և միջազգային	Պարբերական հետազոտություններ, վերլուծություններ, վիճակագրական տվյալներ: Միջազգային կազմակերպությունների առաջ քաշած նախապայմաններ, Հանրային քարոզարշավներ:	Ներկայացուցչական միջավայրում /կառավարություն, միջազգային կառույցներ, ոլորտային ՔՀԿ-ներ /

	մշակմանը, այն կառավարություն ներկայացնելու համար։ Նախագծի արդյունքում պարտադրված այդ ծրագրերից **առնվազն 10%-ն ուղղորդելու խոցելի խմբերից որևէ մեկի կարիքների բավարարմանը** 1.3 Պարոն Գիլոյանի աջակցությամբ համայնքերում ներկդրվի նաև **«Ծրագրերի գենդերային ազդեցության գնահատում»** Էլեկտրոնային հավելվածը, որի արդյունքում հնարավոր կլինի չափել համայնքներում իրականացվող ծրագրերի գենդերային զգայնությունը և հաշվետվությունների հիման վրա բարելավելու ոլորտը**:** 1.4 ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, փոխնախարար տիկին Անդրեսյանին է ներկայացվել փորձագիտական փաթեթը, այդ մասին ներկայացվել է նրա կողմից լայն հանրություն հետ հանդիպման ընթացքում /առաջարկը կքննարկվի ԱԺ հանձնաժողովներում/: 1.5 «Կանանց Օրակարգ» ԱԺ հարթակում ներկայացվել է փաթեթը և ԱԺ կին պատգամավորները	անցած մարդիկ) (մեծ)	կառույցի ներկայացուցիչ/ Գենդերային Թեմատիկ խումբը, որի անդամները ՔՀԿ ներկայացուցիչներ են, և համանախագահում է ՀՀ սոցիալական հարցերի նախարարությունը։ Միջազգային կազմակերպություն ներ (ունեն գումարներ, այս ոլորտը առաջնահերություն է) ԵՄ (ունի գումար և առաջնայնություն)		

	տեղեկացված են առաջարկից և առաջիկայում այն կդրվի հարթակում քննարկման:				
ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում ՔՀԿ-ները ունեն ակտիվ ներգրավվածություն և այդ բյուջեները արտացոլում եմ հանրության լայն շերտերի կարիքների լուծումը					
ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում ՔՀԿ-ները ունեն ակտիվ ներգրավվածություն և այդ բյուջեները արտացոլում եմ հանրության լայն շերտերի կարիքների լուծումը:	ՀՀ Բյուջետային հայտերի քննարկման կարգի մեջ փոփոխություններ ամրագրել՝ այդ գործընթացում ՔՀԿ-ների ներգրավվածությունը ապահովվելով – ՀՀ Ֆինանսների նախարարություն, /առաջին քայլը արվել է, ճյուղային նախարարությունները բյուջետային հայտերը քննարկել են ոլորտային ՔՀԿ-երի մասնակցությամբ/	ՀՀ ֆինանսների փոխնախարար պարոն Բրուտյան, ԱԺ պատգավորներ, ԻՀԱ թիմը, Ծրագրի փորձագետ Հովհաննես Ավետիսյանը	Իրավաբանների Հայկական ասոցացիան, Համայնքների միությունը և ոլորտում աշխատող այլ ՔՀԿ-ներ, կոալիցիաներ, Միջազգային կառույցներ, ԱԺ գործընկեր անձինք, Միջազգային կազմակերպություն ներ, ՔՀԿ ոլորտային կոլաիցիաներ, որոնք ակտիվ մասնակցություն կունենան բյուջետային հայտերի քննարկմանը և հանդես կգան նախաձեռնությունն երով:	2020թ ՄԺԾԾ հայտերի քննարկման լավագույն օրինակը, այդ օրինակի տարածումը և ջատագովությունը Ոլորտային մասնագետների կարծիքների միջոցով լոբբինգ	Պահանջով ձեռք բերված, ներկայացչուչական հանդիպումներ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Վերջնանպատակ և նպատակներ	Ցուցիչ	Ժամկետ
Վերջնանպատակ 1 ՀՀ համայնքների տեղական բյուջեներում և տեղական մակարդակում իրականացվող ծրագրերում հաշվի են առնվում երեխաների և գենդերային զգայուն խնդիրները:		
Նպատակ 1 Երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման արդյունավետ մեխանիզմների թույլ մակարդակի հաղթահարում ազգային և տեղական մակարդակներում, ինչպես նաև ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կոալիցիաների շրջանում:	,,Գենդերային բյուջետավորման ներդրման հնարավորությունների վերաբերյալ առաջարկությունների փաթեթ, որը իրենից ներկայացնում է բարեփոխումներ և համայնքային մակարդակում և ազգային մակարդակում: Առաջարկությունների այս փաթեթը քննարկվել է մի շարք հարթակներում և պլանավորվում է իրականացնել ջատագովություն նրա դրույթները իրականցնելու նպատակով. Նախատեսվում է՝ 1. Կանանց Օրակարգ՝ «Հասարակական կազմակերպությունների և ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժերի միջև համագործակցության հարթակում քննարկում կազմակերպել, 2. Հանդիպում ,,Աշխատանքի և սոցիալական հարցերի,, փոխնախարար Ժաննա Անդրեասյանի հետ, 3. Աշխատանքային հանդիպում ՀՀ Տարածքային նախարարությունում 4. ,,Համայնքում սուբվենցիոն ծրագրերի հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը,, նախագծի տարածում ՀՀ խոշորացված համայնքներում “Ծրագրերի ազդեցության գնահատում” էլեկտրոնային հավելվածի տարածում Խոշորացված համայնքներում	Սեպտեմբեր-հոկտեմբեր 2019 Հոկտեմբեր-նոյեմբեր 2019 Սեպտեմբերից-դեկտեմբեր 2019 2019 հոկտեմբերից- 2020թ սեպտեմբեր 2019 հոկտեմբերից- 2020թ սեպտեմբեր

1.1 Համայնքների ծրագրերում երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման մեխանիզմների առաջարկությունների փաթեթ	,,Գենդերային բյուջետավորման ներդրման հնարավորությունների վերաբերյալ առաջարկությունների փաթեթի քննարկմանը մասնակցել են ԱԺ 10 պատգամավորներ, կանանց խնդիրներով զբաղվող նոր 6-7 կազմակերպություններ : Արդյունքում ունենք լրամշակված առաջարկությունների փաթեթ՝ Գենդերային բյուջետավորման ներդրման հնարավորությունները բարելավելու համար:	2019 թ.—հոկտեմբեր-2020 թ սեպտեմբեր
1.2 Մշտադիտարկվել են ծրագրի թիրախ 10 խոշորացված համայնքների բյուջեները	• 10 խոշորացված համայնքներում իրականացվել է հարցումներ 2000 բնակիչների շրջանում և 200 հարցումներ ՏԻՄ, ՔՀԿ-ներ և վարչական աշխատակիցների շրջանում: • Բյուջեի մասնագետի կողմից դիտարկվել են 10 խոշորացված համայնքների բյուջեները • Մշակվել է ,,Պարզեցված բյուջեի ուղցույցը,, • Մշակվել է Արենի համայնքի պարզեցված բյուջեի օրինակը, • Արենի համայնքի պարզեցված բյուջեի օրինակը նախատեսվում է տարածել մյուս համայնքների համար՝ որպես օրինակելի նմուշ՝ 2020թ համար:	2019 սեպտեմբերից -2019թ դեկտեմբեր
Վերջնանպատակ 2 ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում ՔՀԿ-ները ունեն ակտիվ ներգրավվածություն և այդ բյուջեները արտացոլում եմ հանրության լայն շերտերի կարիքների լուծումը:		
Նպատակ 2 «Վիննեթ Հայաստան» ցանցի և շահագրգիռ կողմերի ներգրավվածությամբ բարելլավել, մշտադիտարկվել և ջատագովվել է ՔՀԿ-ների մասնակցության ՀՀ պետական բյուջեի		

վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում մասնակցության մեխանիզմներ:		
2.1“՛Town Hall” համայնքային ժողովների կազմակերպում	Գորիսում և Մեղրիում կազմակերպել են “Town Hall” ձևաչափով 2 համայնքային քննարկումներ են կազմակերպվել Գորիս և Մեղրի քաղաքում:	2019 մարտ-ապրիլ
2.2 Աշխատանքային խմբերի ձևավորում, հանդիպումների կազմակերպում	- Աշխատանքային հանդիպումներ են կազմակերպվել ՀՀ տարածքային Կառավարման նախարարությունում: - Աշխատանքային հանդիպում Գորիս և Տեղ համայնքների ՏԻՄ ներկայացուցիչների հետ	2019 հունվար-2020 մայիս 2019 մայիս – 2019 դեկտեմբեր
2.3 SS փորձարարական Հավելվածի գործարկում	Ծրագրի շրջանակներում ստեղծվել է “Ծրագրերի ազդեցության գնահատում” էլեկտրոնային հավելվածը: Գորիսի համայնքապետարանի կայքում /goriscity.am/ կավելանա պատուհան “Ծրագրերի ազդեցության գնահատում” անվանումով	2019 մայիս- 2020թ մայիս
Կոալիցիայի/ցանցի ընդլայնում	Կազմակերպվել է «Վիննեթ Հայաստան» ցանցի արտահերթ ժողով՝ ցանցի կոալիցիայի ընդլայնման նպատակով Ներկաացուցիչների միջև կնքվել է համագործակցության հուշագիր՝ ծրագրի խնդիրների լուծման ուղղությամբ համատեղ գործելու, ջատագովելու և մշտադիտարկելու համար:	2019 հունվար- 2020 մայիս